ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/97

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 16.11.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/97 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 16.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի երկրորդ հարկի վերանորոգման աշխատանքների

ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և գնահատող հանձնաժողովի որոշմամբ զբաղեցրել է երրորդ տեղը, իսկ առաջին տեղը զբաղեցրել է «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն: Ընկերությունը գրությունով գնահատող հանձնաժողովից պահանջել է «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերի պատճենները:

Ուսումնասիրելով հանձնաժողովի կողմից ներկայացրած պահանջված փաստաթղթերի պատճենները, պարզվել է, որ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմանավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջին: Սույն «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը, սակայն «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագրով իրականացրած աշխատանքները կատարվել են միայն բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի շրջանակներում: «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նախկինում կատարված աշխատանքների կատարողական ակտերում նշված են միայն պատուհանների քանդում, պատուհանների տեղադրում և թեքությունների հարդարման աշխատանքներ, որոնք չեն համապատասխանում էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաներին վերաբերվող աշխատանքներին: «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագրով իրականացրած աշխատանքները չեն համապատասխանում «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված կատարվող աշխատանքներին:

Ելնելով վերոհիշյալից՝ Ընկերությունը գտնում է, որ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմանավորող փաստաթղթերը չեն բավարարում հրավերի պահանջներին:

Ըստ հրավերի 2-րդ կետի 2.4 ենթակետի՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները): «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նախկինում կատարված աշխատանքների կատարողական ակտերում նշված են միայն պատուհանների քանդում, պատուհանների տեղադրում և թեքությունների հարդարման աշխատանքներ, որոնք չեն համապատասխանում էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաներն վերաբերվող աշխատանքներին: «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագրով իրականացրած աշխատանքները չեն համապատասխանում «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով Ընթացակարգի հրավերով նախատեսված կատարվող աշխատանքներին:

Ընկերությունը գտնում է, որ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմանվորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջին:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝

1. «Արտ Պլաս» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը.

2. «Արտ Պլաս» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը.

3. «Արտ Պլաս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը.

4. «Արտ Պլաս» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ի լրումն բողոքի՝ 23.11.2018թ. գրությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ուսումնասիրելով հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացրած պահանջված փաստաթղթերի պատճենները, պարզվել է, որ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջին: Սույն «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական և արտադրական,էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը, սակայն «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագրով իրականացրած աշխատանքները կատարվել են միայն բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի շրջանակներում: «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նախկինում կատարված աշխատանքների կատարողական ակտերում նշված են միայն պատուհանների քանդում, պատուհանների տեղադրում, և թեքությունների հարդարման աշխատանքներ, որոնք չեն համապատասխանում էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաներին վերաբերվող աշխատանքներին: «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագրով իրականացրած աշխատանքները չեն համապատասխանում «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ- 18/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված կատարվող աշխատանքներին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի՝ օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ հրավերը պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններն են:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում. 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում. 3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Նույն Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ 1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը. 2) մասնագիտական փորձառություն. 3) տեխնիկական միջոցներ. 4) ֆինանսական միջոցներ. 5) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերը նշված իրավանորմերի պայմաններում Ընկերությունը հանգում է հետևյալ եզրահանգումներին.

- Հրավերը որպես օֆերտա սահմանել է ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված բոլոր էական պայմանները, այդ թվում՝ պայման մասնակցի մասնագիտական փորձառնության մասին, այն է բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը: Այսպես՝ համաձայն ՀՀ Կառավարության 2 հուլիսի 2009 թվականի N 777-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի Լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝ 1) բնակելի, հասարակական և արտադրական, 2) տրանսպորտային, 3) հիդրոտեխնիկական. 4) էներգետիկ, 5) կապի: Վերը նշվածի պայմաններում «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում նմանատիպ աշխատանքներ կատարած լինելու վերաբերյալ պայմանագիրն ըստ էության

չի ապացուցում որևէ կերպ հրավերում նշված և պարտադիր պայման հանդիսացող պայմանի պահպանված լինելը կամ դրան տիրապետելու հանգամանքը: Այսինքն լավագույն ցանկության դեպքում նույնիսկ, հնարավոր չի «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ին համարել բավարարած այս պահանջը: Ըստ էության հաշվի առնելով հրավերի պայմանները, «ԱՐՏ ՊԱՍ» ՍՊԸ-ն իրավունք չունի իրականացնել մրցույթի արդյունքում կնքման ենթակա պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները:

- Կոպտորեն խախտվել են պետական գնումներում իրավահավասարության, մրցակցության, խտրականության արգելման սկզբունքները: Ինչպես է հնարավոր հաղթող ճանաչել մի մասնակցի որը չի բավարարում հրավերով սահմանված էական պայմաններից մեկը: Ստացվում է այնպես, որ ըստ էության մրցույթի հրավերը կարող է կրել բացարձակապես ձևական բնույթ կամ Պավիրատուն արհամարհելով հրավերի պայմանները դրսևորում է ակնհայտ կամայական վերաբերմունք, միևնույն ժամանակ կոպտորեն խախտելով համաչափության սկզբունքը:
- Պետական գնումները որպես այդպիսին հանրային և մասնավոր իրավահարաբերությունների այնպիսի խառը համակարգ է, որտեղ պետությունը կամ համայնքները կամ կազմակերպությունները հանդես գալով որպես պատվիրատուի, մյուս կողմից պետությունը իրեն վերապահելով վերահսկողական գործառնություններ, ապահովում է ձեռնարկատիրական այդ դաշտում ապահովել ներդաշնակ քաղաքացիաիրավական այնպիսի պարտավորական բնույթի հարաբերություններ, որոնք հիմնված լինեն օրինականության, մրցակցության հիմնարար սկզբունքների վրա: Կոնկրետ դեպքում խախտվել է նաև մրցակցության սկզբունքը: Կազմակերպություններն իրենց մրցունակությունը գնումներում ապահովելու համար երբեմն գիակցաբար մասնակցում են մրցույթներին, որոնցից ակնհայտորեն շահույթ ստանալու հավանականությունը քիչ է կամ վնասաբեր է, սակայն դրանով իրականում ձևավորում են շրջանառություն և կենսագրություն, որպեսզի հետագայում կարողանան դիմանալ մրցակցությանը և զարգացնել իրենց գործունեությունը: Ընկերությունն ունի տարիների փորձ շինարարության գրեթե բոլոր ոլորտներում, ունի պրոֆեսիոնալ աշխատակիցներ և անհամեմատ լուրջ շրջանառություն գնումներին նույնիսկ առանձնակի խոշոր մրցույթներին մասնակցելու համար: Բավականին անհասկանալի էր և իրավական և

մնացած այլ առումներով «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի հաղթող ճանաչվելու հանգամանքը: Բնականաբար հատուկ մասնագիտական գիտելիքներ պետք չեն միմյանցից տարբերակելու բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքները: Դուռ և պատուհան փոխելը չի հանդիսանում ոչ էներգետիկ և ոչ էլ հիդրոտեխնիկական բնույթի շինարարություն:

- Զուտ իրավական տեսանկյունից որպես վերջնական դիրքորոշման.

1-ին «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն իրավունք չուներ մասնակցելու Ընթացակարգին, քանի որ ի վերուստ չէր բավարարում հրավերի պահանջներին: 2-րդ՝ Հանձնաժողովը իրավունք չուներ վերջինիս ճանաչելու հաղթող: 3-րդ՝ Պատվիրատուն չի կարող կնքել «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի հետ գնման գործընթացով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագիր, քանի որ վերջինս իրավունք չի ունեցել մասնակցելու գնման մրցույթին ոչ թե մասնակցության այլ հրավերի պայմաններին բավարարելու առումով:

Ընկերությունը վերստին պնդել է, որ «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմանավորող փաստաթղթերը չեն բավարարում հրավերի պահանջներին, որի պայմաններում ներկայացված բողոքի բավարարումն անխուսափելի է:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.11.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 19.11.2018թ. թիվ 214-077 գրությամբ հայտնել է, որ «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի երկրորդ հարկի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով սույն թավականի հոկտեմբերի 29-ին

հայտարարվել է «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտերի բացումը տեղի է ունեցել նոյեմբերի 5-ին ժամը 12:00-ին Armeps համակարգի միջոցով: Ընթացակարգին հայտ են ներկայացրել 31 մասնակից:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ներկայացնի քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման հետևյալ լիցենզիաները՝ բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական: Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք կազմված են եղել հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Որոշում է կայացվել ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում ՀՀ ՊԵԿ-ից ստացվել է դրական եզրակացություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների մասին և սահմանված ժամկետում «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով Մասնակիցը ներկայացրել է նախկինում կատարած երեք պայմանագրերի և դրանց հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրերի պաշտաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի

սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը:

Գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 13-ին կայացրած որոշմամբ Մասնակիցը ճանաչվել է ընտրված:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.11.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար ծննդատան մասնաշենքի երկրորդ հարկի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արտ Պլաս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ նմանատիպ են համարվում բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2018թ.-06.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես նմանատիպ ներկայացվել են «Արտ Պլաս» ՍՊԸ-

ի և «Երևանի Դ. Դեմիրճյանի անվան հ. 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 07.07.2016թ. կնքված թիվ «27ՀԴ-ՊԸԱՇՁԲ16/01» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման, «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի միջև 22.06.2016թ. կնքված թիվ «ՎՊՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման, «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և «Հովի. Շիրազի անվան հ. 169 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 20.06.2018թ. կնքված թիվ «169ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2018թ.-13.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 16.11.2018թ. բողոքը, ի լրումն բողոքի ներկայացված դիրքորոշումը, «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի 19.11.2018թ. թիվ 214-077 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված

աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից «Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար ծննդատան մասնաշենքի երկրորդ հարկի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ***բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Արտ Պլաս» ՍՊԸ-ն, որը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2018թ.-06.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես նմանատիպ ներկայացվել են «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և «Երևանի Դ. Դեմիրճյանի անվան հ. 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 07.07.2016թ. կնքված թիվ «27ՀԴ-ՊԸԱՇՁԲ16/01» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման, «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի միջև 22.06.2016թ. կնքված թիվ «ՎՊՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման, «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և «Հովի. Շիրազի անվան

հ. 169 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 20.06.2018թ. կնքված թիվ «169ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2018թ.-13.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արտ Պլաս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպես՝ ՀՀ կառավարության 02.07.2009թ. «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» հայաստանի հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 777-Ն որոշման 6-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնակելի, հասարակական և արտադրական.

2) տրանսպորտային.

3) հիդրոտեխնիկական.

4) էներգետիկ.

5) կապի:

«Արտ Պլաս» ՍՊԸ-ի և «Երևանի Դ. Դեմիրճյանի անվան հ. 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 07.07.2016թ. կնքված թիվ «27ՀԴ-ՊԸԱՇՁԲ16/01» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսվել էր «Երևանի Դ. Դեմիրճյանի անվան հ. 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գլխավոր մուտքի ճակատային լուսամուտների և դռների, բազրիքների փոխարինման շինարարական աշխատանքների կատարում:

«Արտ Պլաս» ՍՊԸ-ի և Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի միջև 22.06.2016թ. կնքված թիվ «ՎՊՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսվել են պատուհանների փոխման աշխատանքների կատարում:

«Արտ Պլաս» ՍՊԸ-ի և «Հովի. Շիրազի անվան հ. 169 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 20.06.2018թ. կնքված թիվ «169ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1-1» ծածկագրով կապալային

աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսվել են որոշ դասասենյակների պատուհանների փոխարինման աշխատանքների կատարում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «27ՀԴ-ՊԸԱՇՁԲ16/01», «ՎՊՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» և «169ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1-1» ծածկագրերով ընթացակարգերի հրավերները և արձանագրել, որ նշված ընթացակարգերի հրավերներով նախատեսված է եղել բնակելի, հասարակական և արտադրական լիցենզայի առկայության պահանջը: Արձանագրում եմ, որ «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագրեր ներկայացված «27ՀԴ-ՊԸԱՇՁԲ16/01», «ՎՊՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» և «169ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1-1» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից իրականացված շինարարական աշխատանքները հանդիսանում են բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի շրջանակներում իրականացված աշխատանքներ:

«Էջմիածին» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվել է քաղաքաշինության բնագավառի բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիայի առկայություն:

Միևնույն ժամանակ հրավերով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես նմանատիպ պայմանագիր պահանջվելէ բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը: Ընդ որում՝ նշվել է, որ շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության

հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրեր ներկայացված «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և «Երևանի Դ. Դեմիրճյանի անվան հ. 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 07.07.2016թ. կնքված թիվ «27ՀԴ-ՊԸԱՇՁԲ16/01» «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի միջև 22.06.2016թ. կնքված թիվ «ՎՊՀ-ՊԸԱՇՁԲ-16/1» «Արտ Պլաս» ՍՊԸ-ի և «Հովհ. Շիրազի անվան հ. 169 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 20.06.2018թ. կնքված թիվ «169ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1-1» ծածկագրերով կապալային աշխատանքների կատարման պայմանագրերը, գտնում եմ, որ վերջիններիս շրջանակներում իրականացված աշխատանքները «ԷԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի իմաստով հանդիսանում են նմանատիպ, քանի որ դասվում են հրավերով պահանջվող տնտեսական գործունեության նույն խմբին, ընդ որում ներառված են հրավերով նախատեսված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի և ներդիրների ներքո: Մասնավորապես՝ հրավերով նմանատիպ է դիտարկվել բնակելի, հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը, իսկ «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են բնակելի, հասարակական և արտադրական աշխատանքների կատարված լինելը հավաստող պայմանագրեր: Այսինքն, հրավերով փաստացի նույնպես պահանջվել է բնակելի, հասարակական և արտադրական բնագավառի աշխատանքների կատարված լինելը, որը և ներկայացվել է «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից:

Ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից որպես նմանատիպ ներկայացված կատարված բնակելի, հասարակական և արտադրական բնագավառի աշխատանքները ներառված են Ընթացակարգի հրավերով պահանջվող բնակելի,

հասարակական և արտադրական, էներգետիկ, հիդրոտեխնիկական բնագավառի աշխատանքների տակ, գտնում եմ, որ Մասնակցի հայտը սույն մասով բավարարում է հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 16.11.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**